

ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ



ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՐԳ Ա.



1929

ԱՂԱԿԱՆԴՐԱՆ



ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

# ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ի Ր Ք Ա .



1 9 2 9

ՏՊԳՐ. ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԱՂԵՔՍԻՆԴՐԻԱ







ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ † 1891



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Երբ ասի զրեթէ երեսուն տարի առաջ ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ԱՐՇԱԿ Բ.ի գործը հրատարակութեան կու տային՝ յոյս կը յայտնէին՝ ինչ վերջը հեղինակին միւս արձակ գրութիւններն ու բանաստեղծութիւններն եւս ի յոյս ընծայել՝ ցիր ու ցան երկերը որոնելէ յետոյ Կ. Պոլսոյ գրասանց մէջ:

Սակայն այն չարաժողով օրէն ի վեր որ սխալեց զմեզ կռնակ դարձնել մեր արիւնջած ծննդավայրին, հեզհեզէ իրարու յաջորդող անակնկալներն, աւա՛ղ՝ ի սպառ փակեցին անոր դռներն մեր առջեւ: Ուստի՝ նախանշեալ՝ կը գոհանանք սոյն զրոյկով համընթեան յանձնել միայն այն մասը իւր երկերուն որ վերջին ասեմներու փոքորիկներէն պրծելով իբր աւանդ կը մնար մեր մօտ. այդու ոչ միայն որդիական պարտականութիւն մը կը կատարենք, այլ կը կարծենք՝ միանգամայն դոյզն ծառայութիւն մը մատուցանել մեր գրականութեան՝ նուիրելով անոր այսօր դասական հասորիկ մը, որուն անյապաղ պիտի յաջորդէ երկրորդ հասոր մը, ուր ամփոփած պիտի ըլլանք բնական դասական գրութիւններ:

Ա. Ե. Մ.

Աղեմսանդրիա, 15 Օգոստոս 1929





# ԵՂԻԱՋԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ

1841 - 1891

— \* \* \* \* \*

Եղիազար Մուրատեան, ընկի Վանեցի, Այդեատան թաղէն, ծնած է 1841ին. 13-14 տարեկան հասակին, ուսման տենչէն մղուած Կոստանդնուպոլիս կուգայ և Ս. Փրկչեան Ճեմարանը կը մտնէ, որ այն տունը Կրթական ամենէն փայլուն հաստատութիւնն էր դրեթէ:

Իր քայրը, 3-4 տարու իրմէ մեծ, եղբօրը զէպի Պոլիս մեկնումէն օգուտ կը քողէ, յորդորելու զայն որ Պոլսոյ մէջ դասի ձեռնարկէ ընդդէմ հայ աղայի մը՝ հայնալէս Վանեցի որ իրենց հօրենական կաշուածները իւրացուցած էր, իրենց հօր կանխատես մահաւրնէ վերջ:

Պատանին Եղիազար, հաղարումէկ դժուարանոց ենթարկուած՝ և աւելի իր ուսումով քան թէ դատով պարտաւելու հետամուտ, ի վերջոյ 50 տակոյ փոխարէն իր մասին վաճառման հաւանութիւն կուտայ՝ իսկ քայրը մինչև վերջ բողոքող կը մնայ և դատը կը չարունակէ թէև տալարդիւն:

Իր ուսանողութեան միջոցին՝ տպրուստի միջոցներէն զուրկ, Բինկեանցի Յարութիւն սղտ Գասեանէ ամսական մէկ տակի կը ստանայ իբր օրտպահիկ:

1862ին վկայական ստացած է 14 տկանաւոր և

մտաւորական անձնութիւններու ստորագրութեամբ  
ընդ որս Ներսէս Վարժապետեան, Ս . Մամուլեան ևն :  
Ֆրանսերէնի համար ունեցած է մամուլոր դասատու  
մը , Ֆրանսացի մը որ այն ատեն Կայս . սրահատին մէջ  
ուսուցիչ էր և որ յանձնարարութեան մը հետեւանօք  
ձրիաբար յօժարած էր դաս տալ՝ տեանելով մամուլանոյ  
պատանի Նզխաղարի յաջողութիւնն : Հետեւելով ու-  
սուցչական տաղարեղին երկար տարիներ դասախօսած  
է Գուգկուհնճուքի , Պէշիկթաշի , Օրթագիւղի , Իւսկիւ-  
տարի ու Բերայի վարժարանաց մէջ և հիմնած է Իւս-  
կիւտարի մէջ մամուլոր վարժարան մը :

Իր դասախօսութեանց ճիւղերն էին , Հայերէն ,  
Ֆրանսերէն , Գրադիտութիւն և Պատմութիւն : 1866ին  
տառջին անգամն ըլլալով մեր մէջ , «Գրադիտութեան»  
դասաւիրք մը յօրինած է : Յօրինած է նաև «Հայերէն  
Գրաբառ քերականութիւն» , «Ֆրանս . Հայ . քերակա-  
նութիւն» , «Պատմութիւն Բնոյն . Աղղ .» (անտիպ մնա-  
ցած) , «Ճարտատունութիւն» մը , զոր ձօնած է՝ իրեն հա-  
մակիր եղող Գրիգոր Ս . Օսեանի՝ հետեւեալ ոտանա-  
ւորով :

Որ զսարագիրն Կալիպոյ ի հովատուն մայրեաց Գալբան,  
Ան քեզ ժողովեցեւ հովանացեալ նման հանճարով,  
Հարեղոյս ի նորին գեղ ի՞բր ճնշեցեւ եռանդն հրակեզ,  
Ի ժպիս նորին բերիւիլ եւ յարսասուս նորա սրգալ,  
Մեկեմա՛ս, ինձ երանի՞ քեզ պապաւորնս ընկալցիս ձօն  
Եւ անգոր ձայնի քնարիս անմահութեան ծառաւելոյ,  
Լիցի քեւ երկնապալաց՝ վսեմականն Գրիգոր Օսեան:



տետրակի ձեւով «Պարսկական Նամականի» (2 տետր)՝ իսկ իր մահուընէ վերջ հրատարակուած է «Քննական Պատմ. Արշակ Բ.ի եւ անոր Պապ որդւոյն» գործը :

Իր երիտասարդութեան տարիքին մէջ գրած քերթուածները զանազան թերթերու մէջ հրատարակուած են, բայց ունի նաեւ իր կեանքի վերջերը գրած բաւական անսխալ ոտանաւորներ :

Մոլեռանդ հայրենասէր մը եղած է միշտ եւ յարգած ու պաշտպանած Ազգային Եկեղեցին իբր Հայ Ազգի գոյութեան կտալը, պայմանը, նոյնիսկ իր դրութիւններէն միայն մէջ ըսած է թէ «Հայաստանեայց Եկեղեցիէն դուրս չկայ հայութիւն» :

1880ին բռնապետական ուժիմը իր գրած հայրենասիրական մէկ քանի ոտանաւորներու համար զինքը ձերբակալել ուղերով՝ Ռուսմանիա փախաւ՝ Ռ. Յ. Պէրպէրեանի հետ միասին, եւ քիչ յետոյ իբր ռուսմանասպատակ վերադարձաւ :

Օտեան եւ Պէշիկթաշլեան՝ իրեն համակրողներ եղած են, իսկ Ստեփան փաշա Ասլանեան, Պէրպէրեան, Պարոնեան, Մ. Չերազ իր բարեկամներն :

Իր կեանքի վերջերը, աշխատած է նաեւ Անգլիերէնի ու զրադած Պայրընի Child haroldով : Ֆրանսացի բանաստեղծներու մէջ մասնաւոր սէր մը ունէր Լամարթինի եւ Վիկթօր Հիւկօյի :

Մեռած է 1891 Սեպտ. 4)16ին ի Բերա, գրեթէ 50 տարեկան հասակին մէջ :

Ահաւասիկ իր գաղաղին վրայ ՌԵԹԷՈՍ Յ. ՊԷՐՊԵՐԵԱՆԻ խօսած դամբանականը :

«Եղբարք, աննշան ոք չէր այն՝ որոյ գաղաղին շուրջը ժողովելու դժբախտութիւնն ունինք այսօր, նա

մին էր այն աղգային ուսուցչական մարմնայն կարողա-  
գոյն անդամներէն : Նա խորհող մ'էր , նա գրող մ'էր :

Եղիազար Մուրատեան , Ս . Փրկչեան ձեմարանի-  
պանդուխտ սան և մին անդրանիկներէն էր այն աշա-  
կերտաց որք անմոռանալի Ստեփան Փալաղեանի տաք-  
շունչին տակ հրահանգուեցան : Կանուխ — շուրջ 30  
տարիներ առաջ մտած էր ուսուցչական ասպարէզի մէջ ,  
իրբւ դասախօս Հայ և Ֆրանսերէն լեզուաց ու գրո-  
ղխոտութեան : Այդ ասպարէզի մէջ շուտով նա ասացաւ  
պատիւ ու համբաւ և մայրաքաղաքիս աղգային նշանաւոր  
վարժարաններէն բազումք բացուեցան իւր առջև ,  
իրեն խնամոյց յանձնելով իւրեանց բարձրագոյն կարողաց-  
գրական ու լեզուագիտական կրթութիւնը : Ընդ երկար-  
նա դասախօսեց Գուղկունճուղի , Պէշիկթաշի , Օրթա-  
գիւղի , Իւսկիւտարի , և Բերայի վարժարանաց մէջ , երկ-  
սեւ ուսանողաց , որոնցմէ ելան շատեր՝ նշանաւոր այ-  
սօր իրենց կարողութեամբն , Հայ ու գաղղիական դրա-  
ղխոտութեանց մէջ : Հիմնեց նա անկախ վարժարան յիւս-  
կիւտար և ի Բերա և վարեց մի քանի տարիներ :

Սովորական ուսուցիչ մը չէր , կողմնակալ , անյառա-  
ջադէմ , հնուց բացուած բազմակոխ ճամբաներէ քա-  
լող աւանդամուլ , ո'չ , ընդհակառակն իր հմտութիւնը զար-  
գացուցած էր նա շարունակ . ուսմանց մէջ նա կը ներ-  
կայացնէր վերանորոգման , կատարելագործութեան ու-  
ղին , վկայ են իւր դասագրքերն . հին ճարտասանու-  
թեանց դէմ կը կանգնէր իւր գրողխոտութիւնը , Կաբ-  
սալի աւանդական քերականութեան տեղ կը դնէր հա-  
յոցեալ «Լատուսը» , աշխարհադարի ուսման համար  
կ'ընծայէր ուսուցչին և ուսանողին , «Մաղիկն» արդի-

Հայ գրականութեան, Հետամուտ էր իւր արուեստի տեսականին, տեղեակ մանկավարժական սկզբունց՝ որոց կը վկայեն իւր դասագրոց հմտալից յառաջաբանք: Իւր սիրելագոյն ընթերցողներէն մին էր Սբէնարրի դաստիարակութեան գիրքը: Ստրկական հաւաքիչ մը, ընդօրինակող մը չէր իւր դասագրոց հեղինակութեանց մէջ, իւր հաւաքածոյն իսկ, իւր «Ծաղիկ»ներն ինքնաբոյր ըսն մ'ունին, անճնական տխր մը՝ դրոշմ մը՝ զոր կուտայ անոնց իւր ուրոյն ծանօթութեամբք ու բացատրութեամբք:

Այո՝ քննադատ մ'էր, ու խիստ քննադատ մը, և իբրեւ դրող՝ այս եղած է մանաւանդ իւր պաշտօնը: Իբրեւ գրական քննադատ մը, նա ունէր գրադիտական ճոխ հմտութիւն աղգային և օտարաղի մատենագրութեան և կիրթ ճաշակ՝ կարող ընտրելու գեղեցիկն ու տգեղը, օգտակարն ու անպիտանն: — Քննադատ մ'էր նաև աղգային կենաց շրջանակի մէջ, և անաչառ, անողոք, մինչև դուրս իսկ վաղել երբեմն այն սահմաններէն զուրս կը գծեն տու մեզ քննադատին առջև ընկերային պատշաճութիւնք ու նախադրուածք և այսու շատ անգամ յինքն գրուեց նա հոգաբարձութեանց զայրոյթն ու տանելութիւնը և հակառակ իւր անվիճելի կարողութեան՝ կորոյս յաճախ իւր դասախօսական բեմերը, մատնուելով, մանաւանդ վերջին տարիներս կարօտութեան իսկ:

Բայց իւր «Պարսկական նամակներ»է մի քանիք պիտի մնան միշտ վկայ իւր անկողմնակալ, արդարաւէր, անկախ ու սէզ ոգւոյն, որպէս և օրինակ հզօր, սրամիտ, յստակամիտ, կորովալից քննադատութեան:

Գիտեմք, իւր քննասէր և խուզարկու ոգին այն-

ալիսի նիւթ մը ևս ընտրեց որ կը պահանջէ խոր պատմական աղբերց հմտութիւն և որ ասկաւուց ևեթ մատչելի է: Եղիազար Մուրատեան Իզմիրեանց կտակի Յանձնաժողովոյն մատուց պատմական քննական դործ մը, մեր պատմութեան ամենէն շահեկան ժամանակներէն և դէմքերէն միտցն վրայ, դործ որ ձեռնհաս քննիչի մը — Մարկոս Աղաբէկեանի — հաւանութեամբն էր արժանացած և զոր մամլոյ յանձնելու փափաքն, աւա՛ղ, չկարողացաւ դահացնել ի կենդանութեան:

Եղիազար Մուրատեանի մէջ կար քերթող մը, իւր գրական կենաց առաջին շրջանին մէջ նա գրած էր խանդոտ քերթուածներ, որոնք Պէշիկթաշլեանի և Օսկանի ուշագրութիւնն ու համակրանքն ձգած էին երկտառը, գրեթէ պատանի գրագետին վրայ և միշտ իւր արձակն ունէր փայլ մը քերթողական, թախ մ'երեւակայութեան:

Տակաւ Մուրատեան հակեցաւ յիմաստասիրութեան՝ նա մանուկեղ յիմաստասիրութեան ընտելեան, դործաւրանաւոր ու անդործարան նիւթոյն: Տարլին և Պիւլսներ եղան վերջին սիրելաւոյն ուսուցիչքն այս ուսուցչին որ ամեն լաւ ուսուցչաց տէս սիրեց ցլերջ քլլալ միանգամայն ուսանող մը: Նիւթապաշտ մ'եղաւ նա դժբաղդաւար, մտածութիւն և զգայում վերագրելով նիւթոյն, թերեւս համոտաւածեան մը՝ տիեզերաց մէջ տեսնելով միանգամայն դայն որ կը շարժի և դայն որ կը շարժէ: — Այլ անկեղծ համոզումներ միշտ յարգելի չե՞ն, ո՛րքան և ուղղափառ չլինին կամ չերեւին անոնք: Ինչ որ ալ լինի, Եղիազար Մուրատեան խորհող մ'եղաւ, իմաստասէր միտք մը, իւր սուօրեայ դործէն յաճախ վեր հ'առնուր իւր մտածութիւնը և կ'ուզէր դայն յաւի-

տենութեան խորոց մէջ, ճգնելով իւր մտաց լուսով  
թափանցել խաւարն որ կը ծածկէ սկիզբն ու վախճանը,  
— տկար ճիգն, լոյս աղօտ, բայց որ կը յայտնէ մեծ  
մտքերը, ազնուական՝ բարձր ոգիները:

Կարող և յառաջդիմական ուսուցիչ, դասգիր, քննա-  
դատ, քերթող—խմաստասէր, ահա ինչ որ եղաւ Ե-  
ղիազար Մուրադեան: Եղաւ և հայր ընտանեաց, ու-  
նեցաւ մի ուստր և մի դուստր, մանչն ըրաւ ընտիր  
գերմանապէտ մը, աղջիկն ընտիր դաշնականար — ար-  
ուեստապէտ: Ընտանեկան, ազգային, դաստիարակական և  
զրական ասպարէզներու մէջ աշխատեցաւ անդուլ, ար-  
տագրեց, լուսագոյնն իրականացնելու տենչն ունեցաւ,  
արդիւնաւից կեանք մ'ապրեցաւ: Վայելեց — շատ քիչ  
— պատուէն իւր ճգանց, անողոք հիւսնդութիւնն կը  
չարչարէր զինքն երկար ատենէ ի վեր, ազքատութիւնը  
իւր ամենջանքն աւելցուց այդ չարչարանաց վրայ, իւր  
անկեղծութիւնն ալ, ծայրահեղ դիւրագրգռութեամբ ու-  
րու՛մ յաճախ կուստար բռնն լացատրութիւն, իւր մտան-  
ունեցաւ իւր դժբաղդութեանց մէջ: — Իւր աղջկան  
նորածին փառքն ու անոր դաշնական նուազն եղաւ իւր  
տառապաւից վերջին նեղ օրերուն միակ ավտին: Այժմ  
ալ չի կրեր, իւր հոգին զերծ է մարմնոյն շղթաներէն  
ու պէտքերէն, զերծ նսեւ նիւթոյն կեղեւէն, պայծա-  
ռագոյն կը տեսնէ այժմ դաղանիքը կտւիւսն, որ ան-  
հանգիստ կ'ընէր զինքն. մարմնոյ և մտքի ամենջանքն  
դադրեցան իւր համար, կը հանգչի վստասկեալն, օրն-  
նեալ ըլլայ իւր յիշատակն:

(Արտասուած Վ. Զարգարեանի «Հայ երեսիկներ» գործէն)



« ... Հայերէնի և ֆրանսերէնի ուսուցիչ մը բերին, որուն անունը առանց յուզուելու չեմ կարող յիշել, Եղիազար Մուրատեանն էր :

Եղիազար Մուրատեանը անատգիւտ դասատու մըն էր, թէպէտեւ համալսարան յաճախած չէր, բայց եթէ Ֆրանսա կրթուած ըլլար՝ «Էքզլ Նօրմալ»-ի մէջ դասախօսելու արժանի պիտի դատուէր :

Երբ առջի տնգամ տեսանք զինքը գլխարկով, իր չոր ու թուխ դէմքը և վարի շրթունքին տակը բուսած քանի մը թել պարպիշը՝ զինքը աւելի Քէֆալօնեացի տապետի մը կը նմանցնէինք : Բայց անիկա իր առջի դասախօսութեամբը անմիջապէս զմեզ հրապուրեց : տեսնա՞նք որ մարդը սովորական վարժապետ մը չէր : Իր ընտրած մէթոտը հինցած, մզլոտած բաներէ կազմուած չէր : ամենապարզ նիւթ մը խառատաիրական, բանասիրական և գիտական աղով մը կը համեմէր, տափակ բաներու և գրուածքներու ոխերիմ թշնամին էր :

Ինք առաջինը եղաւ՝ հակառակ գրութար քերականութեան մը հեղինակը ըլլալուն՝ որ աշխարհաբարի մոլեռանդ մը ըլլալը բացորոշապէս մեզի արտայայտելէ չքաշուեցաւ : Ինքը եղաւ մեզի գրագիտութեան դասը սկսողը, գրական պատմութեան մեզի առաջին աւանդողը :

Միւս ուսուցիչներն ալ մեր ընդարմացած միտքերը սթափեցուցին իրենց նոր ու հրապուրիչ դասախօսութիւններով :

Ասիկա հաղիւ 1 կամ 1 ուկէս տարի տեւեց :

Ուրիշ հազարաորձութիւն մը եկաւ, որ գրեթէ Intellectualներէ կազմուած էր, որուն առաջին դործը եղաւ,

Ինչպէս ինքզինքը յարդող հոգաբարձութիւն մը ուրիշ կերպ չէ կարող ընել, այդ սքանչելի դաստատուներէն... զմեզ զրկել:

Նախ ըսեմ թէ Նդխողար Մուրատեանը անխափա մնաց, վասնզի նորեկ հոգաբարձուները շատ կը յարգէին զանիկա և քիչ մըն ալ կը վախնային անոր դժբիչէն ու լեզուէն:»

(Քաղուած «Մասիս» հանդէսի 26 Օգոստոս 1900, թ. 35ի Գրիգոր Մինեճեանի «Նարեկեանի Յիշատակներ»էն:

★  
★

1884 Յունիս 26, Վան

Անձկալի բարեկամ,

Ընկալայ ձեր պատուական նուէրը, նուէր՝ վաղեմի բարեկամէ և Մեծ Հայրենակցէ, վասն որոյ անպատում եղաւ ուրախութիւնս «Ծաղիկ» անուն ունի ձեր գըրքոյիդ. ծաղիկ է նա սրտի, ծաղիկ է մտաց: Մեծադին է նա յաչս իմ և նոցա՝ որ դիտեն ըստ արժանւոյն գըրհաստել, քան զայն՝ զոր նուիրեն իշխանք: Անմահ ես դու, բարեկամ, քո երկերով. ուրախ եմ յոյժ ընդ այն, և տաւել ուրախ որ քո անմահութիւնը փառք և կեանք է հայրենեաց:

Սիրտս զքեզ կը սրտէ, քու կարօտով կը մաշիմ. ահա այս փոխադարձ նուէր քո բարեկամէն, ընկալ, կ'աղուչեմ:

Կը մաղթեմ քեզ յաջողութիւն և կեանք երկար յողովուրդ և ի պարծանս Հայրենեաց:

Քոյդ՝ Տ. ԱՄԻՐՃԱՆԵԱՆ

Խ. Զ. — Տ. Տիգրան Ամիրճանեան, բնիկ վանեցի, գրողէտ, հեղինակ և ուսուցիչ: 1860ական թուականներուն կը պաշտօնավարէր Գառզիի դի Արամեան վարժարանին մէջ:



**ՏԻԿ. ՄԵՀՐԻԻՊԷ Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ † 1915**

Քոյր հանրածանօթ աղջային, Յակոբ Արշակի, հիմնադիր Ղալաթիոյ աղջ-  
մատենադարանի և մեծ ախոյեան Ազգ. Սահմանադրութեան :

**ՊՈԼԱՏՐԸ ՍՈՂՈՄԻԿ—ԱՍԹԻՆԷ † 1913**

Տաղանդաւոր գաշնակահար-արուեստագիտուհի :



# Մ Ա Ս Ն Ա.

(ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ)



## ՉԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Օսար ափունք ցբուած ի սփիւռ  
Ով սիրասուն իմ զաւակունքս,  
Ձեր հայրենիք սրտում իսուր  
Ձեզ կը դիտե արցունք յաչկունս.

Իմ սահարներս սեր կը կանգնե,  
Իմ նախասինքս արիւն արբէ:

Ո՛հ, այս քանի դարեր անցան  
Ուխտեցիք ինձ սեր, յոյս եւ կեանք,  
Ահաւ մրցում, հեռ, վիշտ եւ ցաւ  
Ա՛յս իմ բաժին, ա՛յս է ձեր ջանք.

Իմ սահարներս սեր կը կանգնե,  
Իմ նախասինքս արիւն արբէ:

Ի բա՛ց, ո՛վ դուք, որ օտարի  
Փառաց պատուոյ էք խնկարկու,  
Անմահութեան դրօժ սեր ազգի  
Նախնեաց քրտնք ծախած շփոյ.

Իմ սանարներս դուք չեք կանգնեւ,  
Իմ նախասիրնս դուք չեք արբեւ:

Վանցնիս այսպէս անթիւ օրեր,  
Նա յաւերակս նստած յերեր,  
Իբրեւ այրի հրոյ մասնած,  
Կոյս՝ ոյր օժիտն է անարգուած.

Գոչեմ սանարս ո՞վ կը կանգնի.  
Իմ նախասիրնս ո՞վ կը արբեւ:

1870



## ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԲԱՂԴԲ

Ի գերանրաւ սփանչելիս հայել բնութեան եւ խոկալ  
Շունչ սալ ծաղկանց եւ թռչնեկին պաշապանել անբարբառ,  
Սլանալ յասեղս, մխիլ յանդունդ, ունայնութեան լինել հուպ  
Եւ թէ ինինչ թէ ի յարթմնի, որիլ յանուրջս յարածուփ,  
Բանաստեղծին ա՛յս է բաղդ:

Սիրել զճնորհս, զմայլիլ ի գեղ, գոլ նահասակ զգացմանց,  
Արհամարել զշանթ աշխարհի, ժպտիլ ընդ թոյն սեգ արանց,  
Յերկինս Աստուած, յերկրի զհաննար լոկ դաւանել գահերեց,  
Եւ թէ թռուառ՝ այլ մարդկութեան պահել զանուն անաղաւթ,  
Բանաստեղծին ա՛յս է բաղդ:

Այո՛, շղթայք, սուր եւ սապար կախեալ զգլխովս ի վրեժ,  
Թէ ինձ սպառնան կարնել զկեանս կամ կենդանւոյն սալ հրկեզ,  
Քա՛ւ ինձ դրժել որ ինչ յերկնից ինձ աւանդեալ սուրբ նուեր,  
Զգլուխս ի սուր մասնեմ դահնին, սիրսս աննկուն սամ առ Տէր,  
Բանաստեղծին ա՛յս է պարս:

## Ի ՇԻՐԻՄ ԿԱՐԱՊԵՏԻ ՇԱՆՔԵԱՆ

### ՀԱՌԱԶԱՆՔ

Լռեցին քոչնոց աղու դալալիկ  
Նւ ջահ գիշերոյ իւր լոյս խաղաղիկ,  
Ծաւալէ ի բլուրս, յանստաց ծրմակ,  
Ու բնութիւն հաւայն մնջէ անուշակ.  
Լոկ ողբանուագ սոխակին երգեր  
Խոր հառաչանացս կը գտնեմ բնկեր,

Ես՝ որ գլխիկս ցուրտ շիրմիդ առ ոստ  
Նորափրփր ծաղկունս սփռեմ բնդ ոլորսս:

Հասակդ ծաղիկ, միտքդ զարդարում,  
Սիրտդ սուրբ հրով հայրենեաց վառում,  
Ո՛վ ազնիւ բնկեր, ինչ շուտով քաւար  
Ու զմեզ քողեր սուգ յանմխիբար.  
Ինչ անուշ բուրում էս զոնդ ծնողսներ  
Տուաւ սիրելեացրդ բնդ խոց կարեւեր,

Ես ալ նոյն հոսով ծաղիկներու փունջ  
Արտաւոժ գողում սփռեմ շիրմիդ տուրջ:

Բայց Այրարասայ աւա՛ղ քեզ նոնիք  
Զրին հովանի, տալաւդդ մանկիկ,  
Սիրտդ հոն քուաւ, դու օտա՛ր հողով  
Տարագիր հայու ննջես փափափով,  
Ո՛հ քե սուրբ անիւնդ աս հանգչի տապան  
Գեթ Այրարասա՛յ ծաղկամբք անթառամ,  
Սա պսակ հիւսեմ շիրմիդ ի սրնար  
Եւ քաղցր յիշատակդ յղբամ անդադար:

13 Մայիս 1863



## ԻՄ ԽԱՂԱՂ ԺԱՄՆՐՍ

Ա

Ո՛վ, ԿԵԱՆՔ Ի՛նչ ՇՈՒՏ ԿՐ ՍԱՀԻՍ

Անոյ՛՛ զարնան սիւ՛ք շնչեց 'ի պարտեզ.  
«Օհ, վարդ կը բացուի, աչեղն ըսաւ կոյս,  
Երբ նա կը փրքի ծալ ծալ յայս երեզ՝  
Կարծես իմ արտիս ալ կ'արծարծի յոյս»:

Արտասուեց Արփին՝  
Յղացաւ վարդենին՝  
Վազե՛՛ քնքուշ կոյս,  
Ահա սիրոյդ յոյս:

Անցաւ արշաղոյսն, զեփիւռն անուշակ,  
Վարդն եղաւ կուսին սիրոյն սուրհանդակ,  
Կը շնչէ խորշակ, վա՛շ, զգոյ՛՛ կուսիկ  
Զըլլայ թէ խամրի այսիդ պէս ծաղիկ:

Բայց իզուր են ջանք վարդասէր կուսին,  
Բնութեան են օրէնք զի մեռցի մարմին:

Վշտահար միջդեռ անկողնոյ վրայ  
Կը հեծեր մայրիկն, «երկունք է» քսին,  
Ծնաւխարսեաւ մանկիկ բաց լն հուրաշկունք  
Բաբէ՛, սիրահար է այս պատանին:

Թմրեցան անդամք, շիջաւ աչաց հուր՝  
Ո՛ւր ես ցաւած մայր եւ քու զաւդ ո՛ւր:

Դեկտեմբեր 1864



## ԱՌ ԱԶԱՏ ՔՆԱՐՆ ՀԱՅՐԵՆԻ

### ՀԱՆԳԻՐ ՔՆԱՐ

Հանգի՛ր բընար սգազգեցիկ  
Բանասեղծին ցուրտ շիրմին հով,  
Որուն անխնայ չբացին ծաղիկ  
Ցողումս կուսին արսասուհով:  
Երբ բախտակոտ քոչնեկին պէս  
Աւերակացո՛ւ շրջիմ վերայ,  
Ո հայրենիք, լռեց բընար,  
Բայց զգայուն սիրտս չողբա՞ր:  
Երբ շիջանի սրտիս այս հուր  
Որ ի տեսիլ վառի շիրմացրդ,  
Երբ «Աե՛ր» գոչեմ եւ անգրաւարձ  
Շիրիմք բռնն ինձ քե՛ «եկուր»,  
Դողդոջ հայլով դամբան մ՛սնամ,  
Շիրմիս վրա՞յ քորուսա յայնժամ:

Իջի՛ր բընարդ հայրենեաց  
Ի հին աւուրց ծառէն Սսեաց,  
Փոխե՛ լարդդ եւ «սեր» երգե,  
Թե՛ լարդդ փոխին, ձայնդ նոյնն է:

Փոքոսոս 1864

## Ի ՀԱՐՍԱՆԻՍ

ՄԵԾԱՇՈՒԹԻ ԻՇԽԱՆԻՆ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՊԷՀՊՈՒԹՈՎ,

ԸՆԴ

ԱԶՆՈՒԱԿԱՅԻ, ԻՇԽԱՆՈՒՀԻՈՅՆ

ՄԱԳԹԱՂԻՆԵԱՅ Պ. ՏԱՏԵԱՆ

## ՆՈՒՊ

Նրբ գլուխն ամպոց մեջ ծածկեց վեհագուն  
Իշխան Տաշեան՝ իր դուստրն սիրասուն  
Կարծեց թէ ալ գիշեր էր,  
Նայուածք մը դարձուց դեպ ի վեր,  
Իջին կայակէք արսասուաց,  
Ի բիւրեղեայ իւր աչա՛ց.  
«Հայր իմ, հաւաչից ի արեւն  
Թողո՞ւս հոյ՞ր Մագթս ղիմեն»:  
Ըսաւ, ինինչ անուշակ  
Հանգեաւ յիւր աչս սեւորակ:  
Իսկ գորովագութ Հայրն գնայր յերկին  
Յարդարել նոր բաւս որդւոյն սիրային.  
Հանդեպ էին արոտայ

Դլուխ ի խանարն զաչս ի կուրծ  
Թուեր մաղթել անմոռնչ՝  
«Տուր, Տե՛ր, բոս սրտի խնոյ»:  
Ժպտեցաւ Բարձրեալն ու ցողք օրհնութեան  
Տեղացին ի գլուխ Պօղոսի ճասեան.  
Եւ անտի զուարթունս սլացաւ հոլաքեւ.  
Քան զկայծակունս եւ զամպս քերեւ.  
Կացեալ ի սնարքս կուսին՝  
Զայնէր «զարթիւ Մագրաղին,  
Սրբե՛ աչացդ արցունքներ  
Հօրդ օրհնութեան առ ցողեր»,  
Ըսաւ, եւ շաղ երկնային  
Սրսկեց ի դեմքս կուսին:  
Եւ անդէն զարթեաւ պերն ի շխանութիւն,  
Ետեւ զՊէհպուրով զիշխուն վեհազին  
Երջանիկ սիրոյ բաժակ ի ձեռին... ,  
Եւ Զեզ կեանս մաղթեմ եւ բոսս երկնային:

9 Յունիս 1866



## Տ Ա Ր Ա Գ Ի Ր Ն

Պնդ մսեղոք օսար ափանց  
Յարագրելոյս չիք բերկրանք,  
Լեհալ հոգւոյս յոյս հալթենեաց  
Դու ես միայն սփոփանք:

Օսար մաշդեր լոյս չունին,  
Օսար երկինք լին՝ մթին:

Օսար բոյսեր դառն ու անմաւ  
Ջրեր պղստ ու լեղի,  
Դաւժք, անապատք, հովիտք, արտեր  
Ու պարտեզներն անբերրի:

Օսար ծառեր շուք չունին,  
Օսար ծաղիկք հոտ չունին:

---


(\*) Սոյն քերթուածը որ 1870է. առաջ գրուած է, վերջերս լոյս տեսած երգարաններու մէջ վերագրուած է, սխալմամբ, Պէշ-ճիկթաշէանի և. որիչներու. ինչ որ ներկայիս կ'ուղղենք:

Օսար երկիր երջանկաբեր,  
Ծանր այդ պայման ինձ համար,  
Ձիւն, ձմեռ են իւր գարուններ,  
Չունի երբեք ինձ ամառ:

Օսար երկիրն անայոս են  
Օսար արեւ անգութ են:

Օսար թեւ շնչեմ ես օդ,  
Ցաւօք սահիւն իմ օրեր,  
Դեզ Հայաստան սիրակաւոս  
Սիրքս համայն քեզ նուէր:

Օսարութիւն դու փուռ ես  
Այլ հայրենիք դու վարդ ես:



## ԻՄ ԽԱՂԱՂ ԺԱՄԵՐՍ

Բ

### ԹՈՒՐ ՍԻՐՅ ԻՄ

Թո՛ւր սիրս իմ՝ ալ մի՛ յասդեր  
Անհունութեան են գաւառներ.  
Խանդդ որ ի քեզ, կայծդ հրավառ՝  
Զե իսկ անոնց քով շամանդաղ:

Թո՛ւր սիրս իմ՝ մի՛ ՚ի գրգանս  
Ուր յարածուփ շարժին հոգեր՝  
Եւ սին երազք երջանկութեան  
Բանան զբիքս յանլոյս ստուեր:

Թո՛ւր առ սիրսն գիրգ եւ փափուկ  
Դիւաբորբոք քան զկնդրուկ,  
Տո՛ւր կայծդ անոր եւ քոյդ աւիւն,  
Այս ահա՛ սոյլք երջանկութիւն:

## ԼՄ ԻԱՂԱԴ, ԺԱՄԵՐՍ

Գ.

### ԾԱԳԵՏԱԻ ԼՈՅՍՆ

Ծագեցաւ լոյսն, զարթեաւ բնութիւն խոր բնէն,  
Տես յանսառին ի՜նչ տեսիլ՝  
Երգեն քոչունի ալգ սիրելիք,  
Փայլին ի ցօղ մարգագետնիք,  
Մանչե տախտակ, մային գառնիք,  
Զագուկի գմարս, մարք գամուսինս կը հանչեն,  
Առիւծ քոչնիկ, ամեն բան  
«Փստ. քեզ Աստուած» այս է ձայն:

Ծագեցաւ լոյսն, զարթեաւ բնութիւն խոր բնէն,  
Տես ի հովիտս ի՜նչ տեսարան՝  
Գառնիք յարօս, հովիւն սուս արեւիկ,  
Շուշանն ի հովիւ շարժի հեզիկ,

Մահունց ա՛նոյժ ջիւնց վսակաց,  
Յո՛յս, կեանք եւ սէր քեւասարած,  
Շուշան, վստիք, կեանք եւ սէր  
Անմահունց կ'երգեն «դու ես Տեր»:

Ծագեցաւ լոյսն, տես ի շիրիմս ի՞նչ տեսիլ,  
Մարմարիտն ցուրտ եւ նոնիք՝  
Լոկ լռութիւն խորհրդաւոր,  
Նիրհ ո՛չ անել, այլ դարեւոր:  
Յոյս որ ծնողաց՝ արքեւ արցունք,  
Եւ սիրագիրկ պարծ աւսիմ  
Տայ մրմնչել ձայնով երէր,  
«Սերս ա՛լ դուն ես, փառք քեզ ո՛վ Տեր»:

Մարտ 1866



## Ի ՍԳԱԼԻ ՄԱՆ

ԲԻՆԿԵԱՆՅԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅԻ ԳԱՍԵԱՆ

Որ ետուր յոյս թշուառին,  
Տառապելոց սփոփանք,  
«Հայրդ եմ» ըսիր դու որքին՝  
Ընկեալ մեր այս հառաչանք,  
Որ առ քեզ թռանի  
Ո՛ր անմահ հոգի:

Թե վիճակաւ բարձրագահ  
Սրտով եղար միշտ խոնարհ,  
«Երա՛զ անհուն եւ սուեր  
«Են, կրսէիր, այս փառքեր,  
«Կամ իբրեւ խաւար  
«Որ ընդ արշալոյսն  
«Յնդի դիրուսար  
«Գունդեն լուսաբուղխ»:

Այո՛, կանցնի սմէն բան,  
Այլ ոչ կանթեղն յե՛ս մահուան,  
Զոր առ շիրմաւո՛ղ ձեռքդ ելոյց  
Անմահութեան ուղեցոյց:

Մնաց պսակ յերկին  
Արժասու՛մք ի Հայրենին,  
Սուգ բիւր ազգայնոց,  
Եւ ի մէն մի վանգ  
Անուանո՛ղ՝ սրանայ ա՛ն՝  
Յարութիւն անմահ:

Մայիս 1865 (23)



ԱՌ

Ն. ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ

ՆՈՒԷՐ ԵՐԱԽՏԱԴԻՅԱԿԱՆ

Որ ի հոգս յարածուի, սիրեցելոյ Բոյին հօտի  
Անցեալ զառուրբ բազմեամ ելեւ Հայոց ի բաղդին կառս,  
Գաւազանաւն Այրարատս զսարազիւր արդիս նոր՛ն,  
Ի պանդուխտ հովուելով վայրս, արքո՛ւն Դիսապէս,  
Դիբբոսկի, բովս հւլոցաց յաղեսս Հայոց կրթեալ զհանճարդ  
Արդ յաղուեամ մանկսուոյս բազմեալ իբր հայր արեգորով,  
Զայնես, «Մանկունի առ ի դիւր կորուսելոյ բաղդին Հայկայ»,  
«Ի ստուերամած դարուց ի ծոց կամ յաւերակս Հայրենեաց»,  
«Է՛ ձեզ վառել զջահ խմասից ի կանթեղէ Սեղանոյն»  
Զմայլեալ ընդ բանսդ գերաշխարհիկ՝ մասեայ ի համբոյր  
գարշապարացդ:

Տեսիւր զհնարս անհարսար, պնդեալ զլարս Բոյին մասամբ  
Ակն արկեր Բալցր յիս ժպիտ, «որդեա՛կ, շա՛տ եմ աղետ մեր»:  
«Պինդ կալ զհնարդ եւ երգեա՛, ցորչափ կայցեն շունչ  
ի ունգունդ»,

«Աւիւն եւ սեր ազգութեան ազդել ի սիրտ Հայաստանեայց»:  
Եւ իմ ոգեւորեալ ի հայրական յորդորանացդ,  
Առանց իսկ կռելոյ զխակութիւնս անտիական,  
Դողդոջուն ձեռոք մասշիւմ ի ցանկալին իմ ի հնար,  
Դեզ ըզսոյն մտադիւր նուիրելով, Հա՛յր Պատուական:

18 Յուլիս 1864

## ԻՄ ԿՈՐԱԽՍԱՆԻ ԺԱՄԵՐՍ

### ՄՈՆԱ

Ինչո՞ւ այդպէս ամալ անքեր  
Կը շնչես զօդ, ծոյլ բանասեղծ,  
Ի շունչ գարնան բացուին վարդեր  
Անոյ՞ բուրմունք երանգ անեղծ:

Չունի՞ս արցունք, չունի՞ս երգեր  
Մրմունջ օրանցդ վրայ սառեր:

### ԲԱՆԱՍՅԵՂԾ

Տես ծիծառնիկն հասեալ ի բոյն  
Արկեալ ի վայր գանչա կարողին՝  
Այրած արշիւ դիտէ զձագունս  
Ձոր անգութ ձեռք ջախջախեցին,  
Ունի արցունք՝ չունի երգեր  
Տրտնութիւն իւր ձայնն է խեղդեր,  
Հա՛րց աշխարհն վահդակարգել,  
«Ինչո՞ւ յանսի Բաղը չես երգեր»:

—«Ահ, տւր անտառս, տւր իմ լեռներ,  
Գերին զուարթ կրնա՞յ երգել»

Չունի մումունջ, ունի արցունք  
Երգ չծնիր հոգ սրտատուգ:

### ՄՈՒՆԱ

Գեղածիծաղ մեր խորհուրդներ  
Ձոր կեանք այնչափ խնամօք հիւսեր՝  
Յողդողդ բաղդին ի թեւս բարձեալ  
Մէկ շարժումով ցնդին հալեալ.  
Եւ յուսահատ բանաստեղծին  
Նիրհ սրտուքեան մնայ բռժին.  
Այսպէս անաւան յորիւ օրեր  
Երազք, ցնորք, խաղ եւ պարեր  
Սահին անցնին զերդ հով անոյշ,  
Այլ բանաստեղծն ննջէ սնյուշ  
Մինչ ծերութիւն լցեալ զբաժակ  
Մասուցանէ բխս ի նաշակ:  
Ապա զարթնու՝ այլ անագան՝  
Սեւաւօղեալ տեսնէ դամբան  
Սիրս յարհաւիրս, զլուխ թալկահար՝  
«— Ի բա՛ց,» գոչէ, «այդ ստուած բար,  
«Իմ մանկութիւնս այդ չերազեց,  
Անմահութեան դրռումն ո՞վ ջնջեց:»

## Մ Ե Ր Ժ Ո Ւ Մ

Թե՛ սոխակին անոյ՞ իրգիկ  
Մերժած էր վարդն անուշաբոյր,  
Ի՛նչ երփներանգ նորա քերքիկ  
Մեր զգացմանց լինէր հանգոյն՝

Ո՞վ ըսէր՝ ծաղկեայ  
Թե՛ կայ քագունի,  
Ո՞վ կարծէր սիրոյ՝  
Թե՛ կայ հայելի:

Թե՛ ֆրճաբոր այրած հակտին  
Շնչէր ոչ մի շունչ զովարար,  
Եւ վշտահար ինկած արտին՝  
Ոչ մի ժպիտ կենդանարար՝

Ո՞վ ըսէր չուառին՝  
«Կը ցամփի արցունի»  
Կամ բանաստեղծին՝  
Թե՛ «Կ'սփոփի սուգ»:

Երբ սիրափայլ անոյժ աշկունքիդ  
Տեսի ի հուր վառեալ համակ,  
Եւ փունջ վարդից արեւանունքդ  
Սրտիս սրլափ մահագուշակ՝

Ըսիր ինձ «Սիրոյ  
«Կա՞յ ջինջ հայելի»,  
Բաբէ՛, իմ սրգոյ  
Կա՞յ սպեղանի:

Թե սիրոյս քելն է նեւահար՝  
Զի՞ փայր իր սիրս դեռ բաբախէ,  
Տես, մահու դուռ հասած սաւրակ  
Յուղարկաւոր երգով մնջէ:

Բարեաւ կացջիր, ա՛նի,  
Հրեշտակդ աննման,  
Քնար չունի՛ մահ,  
Ա՛յս վրեժ մերժման:

1871



## Ա Ի Ա Ր Ա Յ Ր

Ո՛վ սգապաս դաւժ, ուր սեւ հողին տակ  
Կը ծածկին արմատք վարդից կարմրորակ,  
Վարդիդ սիրահար եմ վայր դիւցազանց,  
Երբ կը յիշեմ զՎարդանն արեամբ է դողած:  
Ներշնչէ հոգւոյս ծաղկանց թագունի  
Անոյժ բուրմանց հետ զՎարդանայն հոգի:

Ընդհետ ոգին Վասակայ  
Իւր մահաբոյր դարուն հետ,  
Անհետ իսպառ եթէ կայ  
Գացող ընդ նոյն արանետ.  
Անիծապարս այն նակաս  
Որ արիւնոս կրէ թագ:

. . . . . :

Այս հասուածը **Վարդան** թատերգութենէն բեկոր մ'է զոր  
**Խաչիւռաթի** մէջ անոր ներկայացումներուն մասնակցած  
անձի մը յիշողութեան կը պատկերն:

## ԿՈՅՍ Ի ԲԱՆՏԻ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ)

Նորաբոյսն շիկնի հասկ՝ խնայեալ ի արոյ գերանդույն,  
Չեւ արկեալ կոխ ի հնձան՝ որքն ծրծե գցող արփույն  
Ի սօր ւ կեզ ամարան:

Թարմ եմ եւ ես իբր զնա պննեալ ի գեղ որպէս նա,  
Թեեւ զարդիս վշտայոյզ սանին զիմ եւ ժամբ անա,  
Դեւ չցանկամ ես մահուան:

Ստոյիկեանն քող պասցի փարիլ զմահուամբ անարսօւր,  
Արսասունեմ ես եւ յուսամ, ի մահաշունչ հիւսիսոյ  
Թեքիմ՝ յառնեմ անխռով:

Բաբէ՛, աւուրք քե չու առիցեն կարգեւ լ մահացուաց  
Չիցեն՝ աւուրք բարեբաս, մեղու իսկ չունի՞ զիւր խայթուած  
Մշտխաղաղիցլ՝ ծով:

Միտք իմ սանար բիւր ցնորից, իզուր պարիսպ սեաւ բանսիս  
Յիս ծանրանան եւ իզուր կամին ՚նդ ոտիւք բնկնել զիս,  
Իմ ի յուսոյ են քեւեր:

Յանագորոյն որսորդին ի թակարդից մազապուր  
Նորասփանչ իմն երջանիկ սլացեալ սոխակն ի յահուր՝  
Տայ դայլաղիկս ընդ այեր:  
Ինձ մեռանե՛լ, որ ի նինջ եւ թե յարթմնի եմ խաղաղ,  
Ոյր խիղճ մտաց ոչ երբեք ասաց, աղջիկ քեզ աւա՛ղ,  
Պիղծ են ձեռք քո ի մեղաց:  
Ողջամբ տեսեալ զիս ցնձան որք յեռանդն զիս տեսին,  
Ի տեսիլ իմ՝ մահագոյժ դեմք ի ժպիտ նրկարին,  
Ի վայրս ցաւոց եւ վշտաց:  
Իմ չեւ հրսեալ ե ի կէտ ասպարիզին ուր դիմեմ,  
Այն ինչ յուզի իմ անկեալ ի հանապարհս՝ դեռ թուեմ  
Զնոնիս մի կամ երկու:  
Բազմեալ այն ինչ եմ անա կենաց շէնդ ի խրախուճս,  
Առեալ զբաժակ ի ձեռին՝ մատուցանեմ ի շրթունս՝  
Լի է բաժակս, ո՛հ լի է:  
Ի գարնայնի եմ դեռ, եւս կամիմ զհունձս տեսանել,  
Զեղանակօք իբր արեգ, կամիմ եւ ես անցանել,  
Եւ կ'ստարել զթիւ ամսոց:  
Դեռ երփներանգ գեղափթիթ քաղունի եմ պարտիզի,  
Այգոյն չեւ եւս տալ ի ծայր է այդ՝ սիրտ իմ փափաքի  
Հասանել ի վերջ ժամուց:  
Ո՛վ մահ, չեւ է հասեալ ժամ, հեռի յինեմ քաջ ի բաց,  
Փութաւ երթալ սփռփել զսիրտս որ յամօք կան ի խանձ,  
Յարհաւիրս յանյուսուրեան:  
Ինձ դեռ փրթի հովասուն, դաւարագեղ Բաղեայ մարզ,  
․․․․․ եւ մուսայից թռանի նուագ,  
Դեռ չց անկամ ես մահուան:  
Թեեւ գերի, տարագրեաց զարքցաւ անդէմ իմս քնար,

Ի լուր ձայնին տղեկեզ եւ մաղթանաց սրտմար,  
Փափկամեջ կուսին:

Եւ թօքափել իմ զլուծ նուաղեալ կենացս եւ թռւառ,  
Ընդ հեռ լծով մուսայից, արկանէի զբարբառ,  
Քաղցրալուր ձայնին :

Գառնակաւոր հեռալուր վկայ բանսիս այս քնար  
Լիցի խորան՝ հնարագիւտ տարփաւորաց սիրտփառ  
Գիտել ո՞ այն գեղեցիկ:

Շնորհ ի բանս կուսին փաղեր ու ի դեմս իւր չքնաղ  
Եւ կենակիցն իսկ նորին ցանգ դողացի թե աւանդ,  
Ստին աւուրքս վաղանցիկ:

Սեպտ. 1865

ԱՆՅՐԷ ՇԷՆԻԷ



# Մ Ա Ս Ն Բ.

«ԱՅՍ ՄԱՍԻՆ ՄԷՋ ԱՄՓՈՔՈՒԱԾ ԵՆ ՑԱՐԴ ՁԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ  
ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ)



## ԱՂԲԱՏՆ ՄԱՀԱՄԵՐԶ

Կը դանդաղէր ու կը դողար եղկելին,  
Մարած աչերն շուրջ կը յածէր յուսահատ,  
Մառն անողոք երկաթեղէն իւր ձեռքին  
Ներքեւ կ'աժ էր խորշումած իւր նակատ,

Շնիկ մ'եր այն զերդ կմախ:

Հոն գտնուէր կիսակործան որմ սեւցած,  
Փախաւ դէպ այն չուառ հիւանդն մահամեռձ  
Եւ կը կարծէր անդ ապաւեն ամրացած,  
Այլ ո՞վ կրնայ զմեզ օրհասէն պահել զերծ,

Ծալլեց ծունկերն ու ինկաւ:

Ու մտախորհ գացի քջած իմ աչեր,  
Հեգ կենդանեակ, դու աղբասին ես պատկեր,  
Ձոր ճօթութիւնն միշտ հալածեց յաշխարհի,  
Մինչեւ որ մահ փռեց զոսկերսն մի առ մի.

Եւ նե՛տեց որդերուն կեր:

Ըն, մինչդեռ նսիսն գիրգ եւ փափուկ յափրացած,  
Թաւշի վրայ նստի քաթեր իւր փռած,  
Հեգն սեղանի չգտնէ իսկ փռանքներ,  
Եւ յե՛տ մահու փոսն ալ չունի արցունքներ,

Եղո՛ւկ ձեզ ո՛վ թուառներ:

1887 Յուլիս



## ՄԱՆ ԵՒ ԿԵԱՆՔ

Յաւիտենից չարագուշակն այն օրէն՝  
Երբ հիւլեմեր միմիեանց կողին սերս կցուած՝  
Սեղծեցին երկինք երկիր համօրէն  
Եւ կեանք սլացաւ ընդ տիեզերս թեւաբաց,  
Շողին զհետ եմուտ մռայլ խնդին՝ վառ,  
«Ես ալ իմ որս կ'ուզեմ» գոռաց անգութ մահ,  
Եւ այն օրէն երեւցաւ փոս մշտաբաց:

Եղանակներ պար յօթնամբ ներդաշնակ,  
Ծնան ծաղկունս, մարգ եւ մարմանդ, բոյր կնիքուկ,  
Առիւծն յանձառ վազեց, ի բոյն իւր՝ տառակ,  
Մարդն հանձառով գեղազարդեց լեռ դերբուկ,  
Սեգ Բաբելոն, Նիւուէն անեղ երեւցան՝  
Դիմ, դիցանայ՝ իրարու գիրկ բերկրեցան,  
Եւ զնոսա կլլեց փոսն սովալլուկ:

Ո՛ւր են համնարք հին եւ նորոգ ազգերուն  
Որոց բիբեր սլացան ի սիրս աստերուն,  
Բազկոք զխորս ուկիսանու յուզեցին,  
Աւա՛ղ, ուրեք կայան, հանգիստ ոչ գտին.  
«Անա՛րգ կասակ անագորոյն դիպուածոյ՝  
«Սին եւ ոսի՛ն են էութիւնք համագոյ»  
Մահ զանոնք ալ մղեց ի ծոց մեծ վրնին:

Այսչա՛փ արցունք, այսչա՛փ նախնիք աւերակ՝  
Զլեցրե՛ն անողոք վիհն անյասակ,  
Մինչեւ արեգ անւոյն վրայ նռնչելով՝  
Թափ ընդ այլ բիւրս անդ անկանի ի հոլով,  
Յայնժամ սեղան հոն կանգնելով խոխոսապանձ.  
Մահ՝ զիւր վերջին խնջոյս ընէ կենսախանձ  
Եւ զանսահմանն արձակէ նիչ քրջելով:

1887 Յունիս



## ՍԻՐՎԱՐԴ

Տասնըվեց զարուհներ  
Խււ աշերն են ներկեր,  
Եւ աչաց մեղմանոյժ  
Ամեն վարդ եւ անփուշ:

Դեռ արեւ ոսկիմաս  
Զերկրի ֆոլ մըթապսւծ  
Զբացած իւր նակսէն՝  
Օր մ'ելաւ անկողնէն:

Այն գիշերը Սիրվարդ  
Երազեց ոսկի զարդ,  
Հայկ եղբօր կը կապէր  
Տաներեց իւր օրէսը:

Եւ ուրախ եր աղջիկ  
Կը կարծէր թէ հայրիկ,  
Օրիորդ մի պարկե՛տ  
Իւր եղբօր գսաւ հե՛տ:

Ու եկան հարսնելորք  
Թունդ եկան բիւրաւորք՝  
Այլ ոչ հարս լուսաշող,  
Կառք բերին սեւասփող:

Պերն Հայկին ծիլ հասակ  
Քնսանեացն Արուսեակ  
Փաթթեցին ու սարին  
Տնփեսայ սեւ հողին:

Այն օրէն ա՛լ Սիրվարդ  
Երբ տեսնէ կարմիր վարդ,  
Տրմասուզ իւր աչէր՝  
Կողողեն արցունքներ:

«Ա՛հ», գոչէ, «վարդ, պսակ  
«Մանու եմ հրաւիրակ  
«Երազ է զոր տեսնեմ,  
«Ճշմարիտն ո՞ւր գտնեմ»:

Առ . . . . . Ե

## Զ Մ Ա Յ Լ ՈՒ Մ

Յափն գեղազուարն վափորին  
Ուր յիշատակ հոծ խոնին  
Հին գեղանւոյն Ելլադայ  
Եւ նախասօրն Ասիայ,  
Մօտ յապարանս սուրբանաց  
Ոյց օդաշու կամարներ  
Ի ծոց իւրեանց են ծառեր  
Այնքան գաղտնիք աճեալանց՝  
Հողմ խնկաբոյր անուշակ՝  
Յուզ' ց զալիս կապուտակ՝  
Եւ ծիրանի փրփուրէն  
Շողաց ի դուռս ....են.  
Յակնիոս կացին էք համակ,  
Զայնիկն քաշեց եւ սոխակ,  
Տեսնել՝ թէ ի՛նչ՝ նոր Ասդիկ  
Յարուցանէ փոքորիկ:  
Ա՛ւադ, քանի՛ պարմանի՝  
Նոր Պարիսներ տարաբաղդ՝

Այդ հակեն գեղանի  
Արդեն ինկան նեժահար:  
Նրբին հասակ նազելի  
Աննման վարս գերդ արփայն՝  
Նրբ յառաւօտ վարդածին,  
Լողայ յալիս ոսկեգոյն,  
Իրան՝ անդրի հրաշակեւոս  
Փիղիասայ արժանի՝  
Վարդապսակ զայդ շնորհի  
Պահպան կրծիցն պաշտելի:  
Ո՛հ, վեհ հակ, երանի՝  
Մանկանացուին երջանիկ  
Որ բազկացդ մեջ առեալ նիրհ՝  
Պարի՝ ու անդ մեռանի:

1885



ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ  
ԿԱՄ  
ՇԻՐԻՄ ԱՆԹԱՌԱՄԻՆ

Տ Խ Ր Ե Ր Գ

Երեկ մարմանդ ծաղկապսակ  
Ծածկեր այս դաշտ բլլուր՝ համակ,  
Այսօր սեւ հող փուշեր եւեր  
Փոխանակեն այն սերերէր:

Երբեմն ծփանք ծով ծիրանի  
Գոռայր, յորձեր, այստեղ ժպտեր,  
Ո՛հ, տես այժմիկ աւա՛ղ անբեր  
Ծածկէ կենաց դեմք գեղանի:

Դու կ'ըսէիր, իմս Անթառամ,  
Ամեն անցնի՝ ես կամ մնամ,  
Աւա՛ղ ինչ տուտ այսիդ վարդեր  
Շիրմին որդանց եղան ի կեր:

Այսպէս եակք անցնին համակ,  
Գեղ եւ հանճար ծաղիկ հասակ,  
Մինչեւ ոչինչ իւր սեաւ քեր,  
Բացած կայրէ ընդ տիեզերն:

1887 Յուլիս

Առ . . . . . Մ

## Ս Ի Ր Ե Ր Գ

Կենաց գարուն անցաւ. անդաւրձ  
Գեռ ես ծաղկի չառի ինչ բոյր,  
Գերեզմանին տեսնեմ վիմ բաց,  
Առ ի՞նչ եկի ի սեաւ յասիս՝  
Քու մի համբոյր  
Մեկնե՛ գկենաց իմ գաղտնիս:

Հիւսէ վարդէ թեւերդ վզիս իմ բոլոր,  
Կուրծիդ կուրծիս վրայ թող տուր բաբախի,  
Սփռէ վրաս ծաղկեայ վարսից քոց ոլոր,  
Ա՛ն, ունկն դիր թե յիս ինչ ծով մրրկի,  
Քու մի ակնարկ,  
Մեղմէ մաշող գիս կրակ:

Ստինգ շրթանցս ցօղեն զշաղ զովարար,  
Իբր զնեկսար որ յաստուածոց ի կանառ՝  
Անմահութեան հեղոյր ծորան ծիրանի,  
Մահկանացուն վիհից գաղսնեաց ծարաւի,  
Եւ թող որ յայս արբեցութիւն  
Հոգիս թռանի յանմահութիւն:

1887 Յունիս



## ԶԱՆԶՐՈՅԹ

Երբ իմ աղջիկս ի դաշնակ  
Երգէ Շոբէն, Պեթովէն,  
Եւ յիմ խոկով լի հակաս  
Բիւրբ ի բիւրուց վիշտ հախարին  
Սիրսս ուռչած իբր ծով մրկոտ  
Ծեծէ յաւեւս իւր ափունքներ  
Եւ ի խորոյ արեւս յաւեւս

. . . . .  
. . . . .

ԱՌ . . . . . Մ

## ՍԻՐԵՐԳ

Երբ արեալոյսն իւր վարդեղեն մասներով  
Գայ նոր հրապոյր սփռել ընդ դառս ընդ բլուր՝  
Ո՛հ, չեմ սիրեր այն խնկաբոյր փափկիկ հով՝  
Որ բնութեան գայ անուշիկ տալ համբոյր՝  
Քան ծաղկազարդ քո այտեր:

Երբոր վարդին տեսնեմ թերթեր բացխփիկ՝  
Որ գրաւե սիրահարաց հուր աշուխ,  
Ո՛հ, ո՞վ կ'ըսէ թէ այն ծաղկանց թագունին,  
Քան գոյգ կոկոնն աննրման է գեղեցիկ՝  
Որ զարդարեն քո կուրծեր:

Բաց ուրեմն սիրտդ բնութեան՝ ո՛վ վեհ եակ,  
Լողա՛, սուգէ ի ծոց անհուն վայելից,  
Բաղդն ոխերիմ քե եւ թափէ զքո բաժակ,  
Ծաղկամբ պննէ անոր շրթներն՝ նորէն լից՝  
Եւ գլասակ արբ, հրնուէ:

Ու երբ արբշիռ գեղով բոյրով ելնես յայց  
Սիրուն բնութեան՝ կամ ականջես սոխակաց,  
Թե ծով վարսիցդ ալեծփէ իւր ծալքեր  
Հեզիկ հողմով յառաւօտ. կամ գիշեր՝  
Ա՛հ, յիշէ՛ սիրսս որ ի քնես տոփէ:

1885



## Լ Ա Մ Ա Ռ Դ Ի Ն

Դո՛ւն ալ ո՛վ մեծ ոգի անցար ինչպէս զեփիւռ այգուն  
Որ գնայ թոթափել ծաղկանց մարգրիս մարգաց վրայ՝  
Կամ բուրումն անմահաբար կնդրկին ծաւալել յօդս,  
Որ յաւան ի բթթել երթան խառնին յանեզր ոչինչ:  
Իրա՛ւ է թէ սուս երազ այս երեւցած շէղ բնութիւն,  
Բայց երազն ալ երբեմն յէս արթնու քեանքողու հանոյ՛ք,  
Իսկ ասոր ինչ անուն տալ, ա՛ն շուարի ուշ իմ եւ միտ-  
Քառս քոն եւ քոն համայն անանուն, անեզր, անբաւ:  
Խուն ինչ ծիծաղ, յաւե՛ս լալիւն եւ հառաչանք արիւնագանգ  
Նւ ստոնց Լամառդին, անբաւելի դու բարութիւն  
Ժպտեցար, հաւատացիր եւ գերագոյն մի զօրութիւն՝  
Կարծեցիր ասոր շնչող եւ յաւիտեան ոգեւորող:

Այլ աւաղ, միթէ հնա՛ր է ո՛ր ըլլայ ո՛ք գերաբան,  
 Երբ այսպէս ամէն հանճար ի հող, յանիւն կը խոնարհի,  
 Երբ Հովեր մուրացիկ, Թասօ ի բանս, Մօլիեռ թռուտ  
 կը մեռանին:

Եւ դու ալ յաշխարհի մի ափ հողոյ միայն թողիւ  
 Վսեմական բու հանճարեդ մեծ հոգիեդ, ազնիւ արեդ,  
 Որոց վրայ բու սաղեր իբր հեգնութիւն կը սաւառնին,  
 Յաւիտենից կոծ եւ ողբ դիպուածին գործոյն վրայ:

. . . . .  
 Տես ինչպէս . . . . .



## Գ Ա Ր ՈՒ Ն

### Մ Ա Շ Ե Ր Գ


Նորեմբ եկաք ծիլ եւ ծաղկունք  
Մխիթարել հեք մահապառք,  
Երեկ ի սուգ բնութիւն համայն,  
Թուեր ննջել ի ցուրտ տապան:  
Այսպէս շուտով լաց եւ ծիծաղ  
Զիրար մղեն յայս սեւ կենցաղ:

Երիտասարդք եւ կուսանք գիրք  
Թեւ զթելով ոլորահիւս,  
Աչք բոցանիւ, սրտի ի սիրտ  
Կ'անցնին անս երգ ի շրթունս,  
Բայց, վա՛հ, ի տես այն դագաղին՝  
Ուր կը ննջեր զարգուն հասակ,  
Հառաչ բռաւ, այրեց զխիւղ,  
Խամրեց շրթանց ծաղիկ ժպիտ:  
Ո՛հ այսպէս միշտ լաց զծիծաղ  
Շուտով մղե յայս սեւ կենցաղ:

Ձիւք ինչ յասիս որ վաղորդայն  
Կարծեք լինել մի երաշխիք,  
Գեղ, մեծութիւն, հանճար համայն  
Դիպուածոյ ձեռքն են խաղալիք,  
Վարդ՝ որ երեկ փոքրէր յիւր ծիլ  
Ա՛հ, տես ինկաւ արմատախիլ.

Այսպէ՛ս ամա պատրանք գլոյս:  
Մըկե անդարձ ի վիճ անլոյս:

1886



## ԱՌ ԿԷՕՔՍՈՒՅԻ

Սիրուն դասրիկ դու վաւարի  
Մշտդալար Կեօփուլի,  
Երուն սարի յառաջ ինչպէս՝  
Այսօր դարձեալ դու նոյնն ես:

Վնիս հալիդ դիմացդ առած  
Ամեն օր նոր շաւարներ՝  
Վառ այտերուդ նորէն քսած  
Հրապուրեա մեր աչեր:

Այլ իմ՝ աւանդ սեւ սեւ մազեր  
Զմբան շաղով ծածկեցան,  
Սրտիս ծաղկին բոլոր թերթեր  
Մեկիկ մեկիկ թափեցան:

Ի գուր մոլար դանդաղ փայլերս  
Մարգիդ վրայ կուգան ման,  
Կոչել անցեալ յիշատակներս  
Թե արդեօք ինձ ձայն մի տա՞ն:

Լո՛ւն եմ անո՛նք գացին ամենք  
Անդարձ ի գիրկ ոչնչին,  
Վա՛հ, ա՛յս է կեանք՝ վազել, վազել  
Մինչեւ հասնինք դուռ շիրմին:

1887 Յուլիս



## ԱՌ ՕՐ. Գ.

Երբ առաւօտեան կոխելով ցողեր  
Կելնես նեմելու մեր մարգիւն վրայ՝  
Ա՛հ, միթէ գիտե՞ս բու ծաւի աչեր  
Ինչ յիշատակաց են ինծի վրկայ:

Ես դեռ պատահեալ էի աղուամազ՝  
Դու վարդ նորափրփր, շուշան հեզամազ,  
Մինչ կ'ընթեռնուիր դիմացս Եղիշե  
Քա՛նի գոյն փոխեր լոյս դեմքդ՝ յիշե.

Ու մէն մի երանգ յայտնէր ծալփն մեջ՝  
Նորագարթ արտիկ սրփմանց ելեւեջ.  
Եւ իմ երազող միտքս բոցավառ,  
Գիրկընդխառն ընդ բեզ սլանար նոր աշխարհ:

Աւա՛ղ կենցաղոյս ունայն ցընորհներ  
Ուշա՛փ բաժակաց մեջ թոյն եմ խառներ,  
Քանի՛ խնջոյից սեղանի զըրաւ  
Տուին արտասուք կոծ եւ ապաւաւ:

Ի զուր իմ աչաց մթաւօղ սմային  
Կը փնտռեմ ժրպիտ բոլ ծիածանին,  
Երազիս հիւրի՛, խոյս տուիր անդարձ,  
Ինձ յիշատակիդ սուգ միայն մընաց:

Ու երբ կոխելով մեր մարգին ցօլեր  
Ելնես ականջել տյգուն սոխակաց,  
Ա՛ն, դարձուր ինե՛ բոլ ծաւի աչեր,  
Արիւնտ արտիս մի տար նոր նարուած:



## Թ Ա Խ Ի Ծ

Զմրուխտի մարգաց վրայ երբ տեսնեմ քեւ ի քեւ  
Որ հեմեն խայտալով պար կայտառ կուսանաց՝  
Իմ աչերս տեսնալից կը սահին անտարբեր՝  
Հետքերուն վրայէն ուր երբեմն խօլ անասն  
                    Խնդրէի երազներ:

Առաւօտ կեանասու երբ անոյ՛ իւր խունկեր  
Գայ սփռել բնութեան՝ եւ երգեն բոշուններ՝  
Ա՛հ, ականջս դաւնակացն չեն թուիր ունկնդիր,  
Որ երբեմն զմայլած ընդ անոյ՛ մեղեդին  
                    Արժասուէր սոխակին:

Պատուհանս հասած կը նայիմ հորիզոն՝  
Ուր յաւերժ բնութիւն կը խաղայ բիւր խաղեր,  
Մերք շուշան բացուի անդ, մերք վարդեր ի կոկոն,  
Այլ անոնի ոչ բնաւ պարարեն զիմ աչեր՝  
Ուր յուզեն միշտ հողեր:

Համակ սուգ արդարեւ, չիք ծիծաղ տեսական,  
Զարասանջ աշխարհիս սուգ միայն է բաժին,  
Փառ, սիսդու, մեծութիւն որ կարծին անսասան՝  
Ստուե՛րի պէս կանցնին:



## ՈՒՂԵՒՈՐ

Ա՛լ հանգչիմ սակաւ մի, անա sor միջուուր  
Տոչորէ զնակասս, դողդոջեն եւ ծուկեր,  
Դեռ երկար գիշերոյ բուն չառած զիմ աչեր  
Յանուշ մրափ հրաւիրէ այս աղբեր վնիս ջուր:

Ուր մնաց Յոյս, Ծիծաղ, Սե՛ր, երա՛գ Բանկական,  
Ա՛հ, իզուր կ'ապաստեմ որ անոնի ալ հասնին,  
Վաղուց իսկ մի առ մի պարսաւած կանգ առին,  
Ու մինակ մոլորած կ'երթամ ես այս համբան:

Վա՛հ, վա՛հ, կեանք խափուսիկ երազ է բնութեան,  
Ուր մեր խօլ միտք մոլոր կը փնտռէ զոմ Աստուած,  
Սին տիպար իւր ցնորից բիւր մարմին զգեցած,  
Իբր պատճառ աղէտից կամ խաւիսի փրկութեան:

Տե՛ս սա վարդ յիւր ծրոց եւ փափկիկ մանուշակ  
Դեռ երեկ թագունի երանգաց եւ գեղոյ  
Արդ կոխան են ոտից՝ կերակուր կամ մրջնոյ,  
Հարց, ո՛ւր է ձեր վառ գոյն եւ բուրումն անուշակ:

Ա՛լ ֆալե՛, ել ֆալե երեկոյ է եղեր,  
Արեգակն է տօգոյն եւ մարգերն են թռնած,  
Սա խոնարհ հիւղին մեջ խռտակդ է պատրաստւած  
Մի վախճար, իշխաննե՛ր ունիս հոն քեզ ընկեր:



## ԱՌ ՍՈՒՍԿ ՉԱՄԼՃԱՅԻ

Երբ արարածք փաղցրիկ ի փուն  
Ինկած խորունկ ննջեն համակ՝  
Անոց սնարին փոլ կեցած դուն  
Կ'երգես օրօր անուշ սոխակ:

Օրօր կ'երգես դու երջանկին՝  
Որ վայելից մեջ է թաղուած,  
Հեգ որբերուն՝ որ հաց չունին՝  
Գետնի վրա՛յ են տարածուած:

Ըսէ՛ ինձի, այն հաւի՞կն էս  
Որ երբ դարձիս Չամլընայեն՝  
Կը գեղգեղեր իմ սիրունիս՝  
Դու կրկնէիր մօտ պուրակէն:

Սիրուն քոչնիկ հոգւոյս հասոր,  
Ի գուր ականջ դրած անյագ՝  
Քու իսաղերուդ մեջ փաջոլոր՝  
Այն գիշերուան փնտռեմ մեկ վանգ:

Այո՛, դու միշտ ես նոյն հաւիկ  
Եւ քու վանկերդ համանման,  
Զի չթողիր բնութեան գիրկ,  
Ու չմոռցար անոր սուրբ ձայն:

Ո՛հ, թեպէտեւ երկրի հոգեր,  
Ու նոր ժրխոր սրտաւռն  
Խցին ականջս բազում ամեր՝  
Ու չլսեցի քու ալելուկ,

Դարձեալ սիրս միշտ առ քեզ քոչի  
Բնութեան սիրով հրաւսոչոր՝  
Ո՛ր տայր, ի ժամ քնոյս վերջի  
Դու երգեիր ինձի օրօր:



## ԱՌ ՈՐԴԵԱԿՆ ԻՄ

Բիւր երազոցս եւ ցնորիցս արգասիք  
Ո՛վ իմ որդեակ, դու եւ յուսոյս երաշխիք,  
Որ բնարիս իմ յարածամ ես սիրող  
Եւ զիս՝ երգել՝ սրտում զուարթ՝ յորդորող:  
Ա՛խ, մի դպչիր իմ վերքերուն կիսասպի՝  
Եւ մի մոխրին՝ որոյ ներքեւ հուր ծածկի:  
Գիտե՞ս ինչո՞ւ վաղուց շրթներս սառեցան,  
Եւ բնարիս իմոյ լարեր համբուցան.  
Զի ամեն ինչ տեսայ յասիս անարժ ւն՝  
Գրաւել զմեզ եւ կաշկանդել յաւիտեան:  
Կեանք՝ անխորհուրդ բնութեան խաղն է անմիտ,  
Անձայր, անվերջ, լոկ դիպուածի մէկ հսպիտ,  
Առաքինին եւ վաճուռներն միասին  
Պիտի գլորին մահուան ի գուրն յաւեւ սին:  
Ա՛խ, երանի որոց երբեք աշխարհի  
Զելան թափեր վրայ մի օր դժայրհի,  
Որ մայրենի սաղմին մեջեն ջնջեցան,  
Եւ կամ կուսին խաբող ժպտին հետ կորան,  
Ու այս արժասուաց ովկիանին ելեալ նիւս՝  
Զնաւեցին միտք սիրտ ի դող եւ անյոյս:

Սեր՝ նենգամիտ աղջկան յաւես է ծիծաղ՝  
Ոսկւոյ միայն փոխանակեալ անդանդաղ.  
Քարոյութիւն եւ մոլութիւն անխտիր,  
Գութ որդեկաց, գութ ամուսնոյ ցան եւ ցիր  
Դրնէ աղտոտ մահնին ոտից պատուանդան,  
Եւ վեր կ'ելնէ գրկախառնիլ իբր անբան  
Օտարի ծոց՝ իբրեւ զխոզն ի տղմի՝  
Որ զգայուած ծրծէ բուրմունս գարշելի:  
Ո՛վ մանկութեան ոսկեղինիկ երազներ,  
Քուր էք հիմա, ալ չտեսնեմ ձեր հետքեր:  
Իսկ պատիւ՝ ո՛ն, առեղծուած է երկդիմի,  
Որ ամենուն բռնաց նման կը մեկնի:

Այսպէ՛ս անա որդեակ, տարտաւ, յուսահատ  
Կ'ապաստեմ ես քե ե՞րբ մանգաղն կենսահատ  
Պիտի հնձէ եւ զիմ կենաց զթելեր  
Եւ անկանիմ ոչքնչութեան հոծ ի ստուեր:





## Յ Ա Ն Կ

|                                          | Երես |
|------------------------------------------|------|
| Երկու խօսք . . . . .                     | Գ    |
| Փղիագար Մուրասեան, կենսագրական . . . . . | Ե    |
| ԱռԳրիգոր Օսեան, ուղերձ . . . . .         | Զ    |
| Նամակ Տ. Ամիրհանեանի առ Ե. Մ. . . . .    | ԺԳ   |

## ՄԱՍՆ Ա.

|                                                                                                          |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Ձայն Հայրենեաց (Օսար ափունք) . . . . .                                                                   | 19 |
| Բանաստեղծին Բաղդը . . . . .                                                                              | 21 |
| Ի շիրիմ Կարապետի Շալնեան . . . . .                                                                       | 22 |
| Իմ խաղաղ ժամերս Ա . . . . .                                                                              | 24 |
| Առ ազատ քնարն հայրենի . . . . .                                                                          | 26 |
| Ի հարսանիս մեծաւոք իշխանին Կ. Պէհ-<br>պուրովի ընդ ազն. իշխանուհւոյն Մազ-<br>քաղինիայ Պ. Տաշեան . . . . . | 27 |
| Տարագիրն [ընդ աստեղոք օսար ափունք] . . . . .                                                             | 29 |
| Իմ խաղաղ ժամերս Բ. . . . .                                                                               | 31 |
| Իմ խաղաղ ժամերս Գ. . . . .                                                                               | 32 |
| Ի սգալի մահ Բինկեանցի Յարութիւն աղայի<br>Գասեան . . . . .                                                | 34 |
| Առ պատ. բարձր Սրբազնութիւն, նուէր . . . . .                                                              | 36 |
| Իմ կորսուած ժամերս . . . . .                                                                             | 37 |
| Մերժում . . . . .                                                                                        | 39 |
| Աւարայր . . . . .                                                                                        | 41 |
| Վոյս ի բանի . . . . .                                                                                    | 42 |

## ՄԱՅՆ Բ.

|                                        |    |
|----------------------------------------|----|
| Աղբասն մահամերձ . . . . .              | 47 |
| Մահ եւ կեանք . . . . .                 | 49 |
| Սիրվարդ . . . . .                      | 51 |
| Զմայում . . . . .                      | 53 |
| Ունայնութիւն կամ շիրիմ Անթառամին . . . | 55 |
| Սիրերգ առ... Մ . . . . .               | 56 |
| Զանձոյթ . . . . .                      | 57 |
| Սիրերգ առ... Մ . . . . .               | 58 |
| Լամառդին . . . . .                     | 60 |
| Գարուն . . . . .                       | 62 |
| Առ Կէօֆսույի . . . . .                 | 64 |
| Առ Օր... Գ... . . . . .                | 66 |
| Թախիծ . . . . .                        | 68 |
| Ուղեւոր . . . . .                      | 70 |
| Առ սոխակ Զամլընայի . . . . .           | 72 |
| Առ որդեակն իմ . . . . .                | 74 |

## ՎԵՐջ



442246





BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE



3 7513 02075272 0

65